

# Մ Ա Յ Ր Դ Ի Ւ Ա Ն

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Ծար. տես թազմ. 1926, էջ 92)

**ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՄԱՀՈՒԱՆ ՀՈՒՐՆ ՈՒ ՏՊԱՒՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

## ՃԽԴ.

**Ս. Ղազարու դիւանի շահնեկան թուղթերու մեր հրատարակութիւնը կը հասնի Մեծին Միիթթարայ մահուան թուականին. զուզագիպութիւն մը որ իր բնական ընթացքով եկաւ գտաւ Ապրիլը, որ նուիրական է մեզ՝ յիշատակաւ Հիմնադրիս երջանիկ փոխանական:**

**Հետևեալը գուժալից թուղթն է, որով Հ. Եղիա Վարդապետ՝ իրը Ցեղապահ Արքայի՝ համառօտիս կը հաղորդէ մեր քարոզիչ վարդապետաց, տալով տեղեկութիւններ Գերյ. Արքայիս մահուան շուրջ, ինչպէս նաև անոր հետեւանցով ինչ ինչ կարևոր հրահանգներ:**

**Վերապատուելեացդ Հայր Յակոբ վարդապետի  
և Հայր Անդրեաս վարդապետի**

Յամի տեառն 1749 Մայիսի 23

**Յիսուսաւանդ ողջունիւ յայտ լիցի Հայրութեան ձերում, զի պատճառն վասն որոյ այսքան ժամանակ գիր ոչ եղն յիեցեալ առ ձեզ, այս է. զի Գերյարգելի աբբայ Նօր մերում անցեալ ամի զեղոնաւութիւնն որ փարատեցեալ էր, դարձեալ եկն ի վերայ, զորոյ զիարգն ոչ քարեմք այժմ մի ըստ միջնէ պատմէ ձեզ: Եւ թէպէտ մեր քաջ իմաստում բժիշկն բազում շանդէ պէսպէս դեղ արար, և երբեմն երբեմն ցաւն թերթեացաւ, բայց վերջապէս փառք բարերար կամացն ասուոծոյ, յապրիի 27 փոխեցաւ յաստի կենաց: Եւ եկ մեզ անպատճելի ցաւ որք Տաճան մեր յայնապիսի գերազանց շնորհալի բարերար Խնամակալ հոգկոր Զօրի և առաջնորդէ, որ և էր փառքն ընդհանուր ազգիս մերոյ: Եւ յոյժ բարուք պատրաստութեամբ և չերմենանդութեամբ եղի փոխիլն նորա յաստի կենաց: Ընկալաւ յառաջապյն զամնասուրը Հաղորդութիւն և զՎերջին Օծութ. և ես մեզ զՎերջին օրհնութիւնն և զպատռէքն: Եւ գրեթէ մինչն ի յատին շնչելն էր զզասա: Յետ այսորիկ արարաք նմա զարժանի մնաւահնէս թաղումն արտասուզ և չերմենանդութեամբ. և զութ օր այգողք արարաք նմա: Զկնի թազման իբրև փոքր ինչ սփոփեցան սիրաք մեր, յետ քանի մի աւուրց ժողով արարաք զումն ի մէնջ կացուցանիլ մեզ փոխանորդ աբբայի, զի կառավարեսէց զմիարանութիւնն մեր ժամանակաւորապէս՝ մինչն ընտրեսցի և կացուցի ոմն աբբայ հայր: Եւ ըստ սրբոյ կրօնիս մերոյ կանոնի և կացութեան նաև ըստ աբբայ Զօրն մերոյ իօրատու պալա ձգելով՝ ընտրեաց և ընդունեցաւ միաբանութիւնն զիս լինի փոխանորդ աբբայի. և այսպէս յիմ վերայ եղաւ**

Կառավարութիւնն հասարակութեան մերոյ մինչև զնոր աբբայ գեցուք։ Որդ որպէս ի ժամանակս կենանութեան աբբայ հօրն ամենայն ինչ կազմ և կարգաւորեալ կայր, նոյնպէս և այժմ։ Խոկ զարբայ ընտրել և կացուցանել այժմ ոչ կարեմք, քանզի պիտոյ է, զի որդ արտաքոյ Վանիցուն են, եկեղեցն՝ եթէ կարասցեն, իսկ որդ ոչ կարեն գալ, զհաւանութիւն իւրեանց գրեսցն առ մեց։ Եւ քանիդ ձեր մալին այդո՛ յոյժ հարկաւոր է, վասն որոյ պիտոյ է զի որուք գրիցէք զհաւանութիւն ձեր՝ այսու օրինակաւ։ Ես հայր այս անուն հաւանիմ և ընդունիմ զնա զու աբբայ հայր, զոր երկու երրորդ մասն ժողովոյ միաբանութեան մերոյ ընտրեսց։ Գարձեալ վասն հոգույ աբբայ հօրն զհինգ հինգ պատարազս մատուշչիք։ . . . Վասն զադարման ներողութեանց ի սուրբ տարրոջն՝ ժամկց զի իրավի յամենայն աշխարհ որբան ներողութիւնք կան, դադարին ի սուրբ տարրոջն, ուստի զզոյշ լերուք, զի մի յայնմ տարրով ևս հոչակիցէք զներողութիւնս խորանաց ձերոց . . . Յարկելս ի Հայաստան է սաստիկ խովովութիւն և զժնդակ զառնութիւն, մինչ զի եթէ հնար էր, ամենեքեան փախչէին յայնմ երկոր, զի այժմ երեք շահ նստեալ են ի զանազան տեղիս և պատերազմին։

Ն. Մ. Հ. Եղիա վարդապետ Փոխանորդ

[Վ. Ենեսիկ - Ս. Ղազար]

## ՃԽԵ.

**Հ. Ղազար կը նկարագրէ վերոյիշեալ տիսուք գումէն իր և քաղաքին կըած  
մեծ տպաւորութիւնը։**

**Վերապատռէցելոց և Յարգեցելոց Հայր Եղիայ վարդապետի  
Փոխանորդի Արքայի և Հօրն իմոյ**

... Եհաս զիր մի կարի անագան, զոր գրեալ էիր Հայր Մարկոսին. և ի զրոյն յայն-  
մանէ իմացայ զուր ինչ ցաւալի զի ի յապրիլի 27 խաւարեալ է մեր հայ ազգին արե-  
գակն, և հիմազգոզն կրօնին մերոյ, վախճանմամբ մեր գերյարգելի Ազքահօրն. ցաւ է  
ինձ և տրամութիւն անպակաս, զի զրկնցաք յայսպիսոյ բարեխնամ և բարեբար Հօրէ  
և Ալաջնորդէ, որ էր փառք և պարտանք և հաստատութիւն ազգին և կրօնին մերոյ . . .  
Արդ ի լսեն զայս ցաւալի լուրս ամենեքեան տրտմցան և ափսոսալով բարեպաշտական  
զթով շարժեցան ի յոզե և ի զութ, և ի պատաստան Աստուծոյ։ Բիշապանուշն տեղույս,  
այսինքն Մինան Վարդապատն յաւուր[ս] հինգ հոչակեաց զայնաւոր պատարագ վասն մն-  
ոելի մնեաւ հանդիսութեամբ. անձ զնից պատարագին յաւուր հինգ յայզոյ և հանդի-  
սական թագումն արար . . . հակ սէխանօն և հատաւորն քաղաքին ես մատուցանել քա-  
հնայիցն, թէ Հայոց և թէ մանարաց զբազում պատարազ . . . Եղիգիւնմսո ևս զհինգ  
հինգ պատարազսն զոր հրամայեալ էր մատուցանել վասն հոգույ Ազքահօրն մատուցաք,  
Վասն սաստիկ ցաւոյ և արտմութեանս անկեալ զնիմ ի մանճի. մանաւանդ տկարութիւն  
ստամոքսիս վասն զի ամեննկին ոչ ընդունի և ոչ մարսէ զկերակուրն. զոնութիւն և փառք  
բարերար կամացն Աստուծոյ որ տանչէ զիս զանազան ցաւով և հիւանդութեամբ . . .  
Վասն կտակի տանն աղաչայ՝ Պետրոսին գրեալ եմ լիապէս թէ որպէս հաստատեալ եմ  
աստ, և եղեալ զբարձրագոյն խաչ մի առաջի գրանն, վասն նշանի և հաստատութեան . . .

Յամի Տեառն 1749

յուլիսի 2

[Հայագաղաք]

Վերապատռութեանդ մամ յամենայնի պատրաստական

Նուաստագունեղ ծառայ

Հայր Ղազարոս կրօնաւոր

ի կարգէ սրբոյն [Անտոնի] Աբբայի

## ՃԽԶ.

Հայաքաղաքին հայազգի դատաւորն է, որ կէս աշխարհիկ բարբառով կը բերէ պաշտօնական ցաւակցութիւնը բաղադրին կողմանէ՝ Միսիթարայ մահուան առթիւ, յայտնելով միանգամայն անկեղծ ու ջերմ համակրութիւն և յարգանց ԵՐ. Հօրս յիշատակին և անոր Ռւխտին հանդէա:

**Օրհ. եղիցի. Յիսոս Քրիստոս**

Գերյարգեցելոյ և վերապատուցելոյ  
Տեսան Տեսան Հայր Եղիա Վարդապետի  
և Փոխանորդի Արքայի մեծաւ Յարգութեամբ ողլոյն

Ջաւալի և գրողալի խապարն լըսէլով ի կողմանէ Մահուանն մեր հոգնոր սուրբ Գերյարգեցելոյ աբբանօն, ի խիստ ցաւեցանք և սուտմըլցանք, որ զրկվիլնք այսպիս սուրբ ապօպական ջօրէ և առաջնորդէ, որ էր փառք և պարծանք արքնատ ազգին Հայոց. և մեր Քաղքին կողմանէն վերապատուելի Քահանային, ի միասին ընդ ժողովրդան աղօթի և պատարագ մատուցիլին վասն հոգոյ լուսաւրեալ հոգի Արքահօրն, զի պարզեցնց Տէր Նմայ զփառ յափենական, և վիճակացիլ հաճեսցի ընդ ընտրելեաց սիրելեաց իւրոց, զի քարեխօսունց առ Տէր վասն հասարակ ազգին Հայոց: Եւ ևս խնդրինք Աստուծոյ որ յայտնեսու միջնորդութեամբ տիրամօր սուրբ Աստուծածածնայ, տացէ և պարզեցնց ընտրել սուրբ և քարի Արքահայր, զի Կարասցէ սրբութեամբ և ինստատթեամբն իւրով հովոել կ կառավարել զայռ սուրբ Կրօնը, զի մեր նաձիային լիցի փառք և պարծանք Վասն որոյ մեծավ ըղձմամբ կու խնդրենք զՎերապատուելութիւն և զամնայն միաբաննքն, որ սիրով ընդունիք այս մեր քաղաքին ալ այս առաջին պատուրուն: Նաևս չորհակալ կուսա արջնատ քաղաքը վերապատուելութեան ձերում ի կողմանէ Հայր Ղազարոսին, որ այս տեղը մեր քաղաքը գալով և այց առնելով զմեզ անպատճելի ուրախութեամբ լըցուցիլ է, միխթարելով և յորդորելով զմեզ իւրեան պատաւական քարոզութիւններով:

Սյևս վերջապէս կու խնդրինք միաբան քահանայիւքն և ժողովրդեամբն, որ զմբր քաղաքն ի միասին հասարակութեամբն միշտ աղօթից չի մոռանաք ձեր տէրութեանը սուրբ և աստուածանկալ մաղթանացը մէջ, որ աստուած պահէ և պահպանէ զմեզ ամենայն փորձանաց, թէ հոգնոր և թէ մարմնաւոր, և պարզեցնց զսէր և զմիաբանութիւնն առ միմիանս ի մէջ ազգիս Հայոց: Եւ այսու Կի մընամէ:

Գերյարգելութեան ձերում

Գրեցի Հայոց քաղաքն  
Die 21 Եbre 1749

Խոնարհ Նառայ  
Խոռնկիանոս Տանիէլեան  
Դատաւոր Հայաքաղաքին

(Շարունակելի)

Հ. Պատուա Տաթևան